Նախագիծ

Արձանագրային

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի լրամշակված տարբերակի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացության նախագծի մասին

Հավանություն տալ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի լրամշակված տարբերակի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացության նախագծին և այն սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով:

Գևորգ Դանիելյան

ՆԱԽԱԳԻԾ
Լրամշակված տարբերակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 5-ի քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 19-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

Հոդված 19. Պատվի, արժանապատվության, գործարար համբավի պաշտպանությունը

Անձի պատիվը, արժանապատվությունը, գործարար համբավը ենթակա են պաշտպանության այլ անձի կողմից հրապարակայնորեն արտահայտված վիրավորանքից եւ զրպարտությունից՝ սույն օրենսգրքով եւ այլ օրենքներով սահմանված դեպքերում ու կարգով:

Հոդված 2. Օրենսգրքի 60-րդ գլուխը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 2.1.-րդ մասով.

„2.1. Պատվին, արժանապատվությանը եւ գործարար համբավին պատճառված վնասի հատուցման կարգը եւ պայմանները:

Հոդված 1087.1. Պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասի հատուցման կարգը եւ պայմանները

1. Անձն, որի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորել են վիրավորանքի կամ զրպարտության միջոցով, կարող է դիմել դատարան վիրավորանք հասցրած կամ զրպարտություն կատարած անձի դեմ:

2. Սույն օրենսգրքի իմաստով վիրավորանքը՝ խոսքի, պատկերի, ձայնի, նշանի կամ այլ միջոցով պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորելու նպատակով կատարված հրապարակային արտահայտությունն է (կարծիքը կամ գնահատող դատողությունը (value judgement)):

Սույն հոդվածի իմաստով արտահայտությունը չի համարվում անձին արատավորելու մտադրությամբ կատարված, եթե այն տվյալ իրավիճակում եւ իր բովանդակությամբ պայմանավորված է գերակշռող հանրային շահով:

3. Սույն օրենսգրքի իմաստով զրպարտությունը՝ անձի վերաբերյալ նրա պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորող եւ իրականությանը

չհամապատասխանող փաստացի տվյալների (statement of fact) հրապարակային արտահայտությունն է:

4. Զրպարտության վերաբերյալ գործերով անհրաժեշտ փաստական հանգամանքների առկայության կամ բացակայության ապացուցման պարտականությունը, կրում է պատասխանողը: Այն փոխանցվում է հայցվորին, եթե ապացուցման պարտականությունը պատասխանողից պահանջում է ոչ ողջամիտ գործողություններկամ ջանքեր, մինչդեռ հայցվորը տիրապետում է անհրաժեշտ ապացույցները:

5. Սույն հոդվածի 3-րդ մասում նշված փաստացի տվյալները չեն մեկնաբանվում որպես զրպարտություն.

ա) եթե դրանք տեղ են գտել դատական քննության ընթացքում դատական քննության մասնակցի կողմից քննվող գործի հանգամանքների վերաբերյալ կատարված արտահայտությունում,

բ) եթե այն արտահայտելը տվյալ իրավիճակում եւ իր բովանդակությամբ պայմանավորված է գերակշռող հանրային շահով, եւ եթե անձն ապացուցի, որ ողջամտության սահմաններում ձեռնարկել է միջոցներ պարզելու դրանց ճշմարտությունը եւ հիմնավորվածությունը, ինչպես նաեւ հավասարակշռված եւ բարեխիղճ է ներկայացրել այդ տվյալները:

6. Վիրավորանքի դեպքում անձն որպես բարոյական վնասի հատուցում իրավունք ունի իրեն վիրավորանք հասցրած անձից դատական կարգով պահանջել ստորև թվարկված միջոցներից մեկը կամ մի քանիսը՝

ա) հրապարակային ներողություն: Ներողություն հայտնելու ձեւը սահմանում է դատարանը,

բ) հերքում, եթե դա հնարավոր է՝ հաշվի առնելով վիրավորանքում տեղ գտած արտահայտության էությունը,Հերքման ձեւը սահմանում է դատարանը,

գ) վիրավորանք տարածած ՁԼՄ-ում դատարանի վճռի հրապարակում: Հրապարակման եղանակը եւ ծավալը սահմանում է դատարանը,

գ) միանվագ փոխհատուցման վճարում

- նվազագույն աշխատավարձի մինչեւ 250-ապատիկի չափով,
- վիրավորանքը անձի դիտավորության կամ կոպիտ անզգուշության հետեւանքով զանգվածային լրատվության միջոցներով տարածվելու դեպքում՝ նվազագույն աշխատավարձի մինչեւ 500-ապատիկի չափով
- զանգվածային լրատվության միջոցով վիրավորանքի դեպքում զանգվածային լրատվություն իրականացնողի կողմից՝ նվազագույն աշխատավարձի մինչեւ 1000-ապատիկի չափով:

Գումարի չափը սահմանում է դատարանը՝ հաշվի առնելով կոնկրետ գործի առանձնահատկությունները :

7. Զրպարտության դեպքում անձն իրավունք ունի որպես բարոյական վնասի հատուցում իրեն զրպարտած անձից դատական կարգով պահանջել ստորև թվարկված միջոցներից մեկը կամ մի քանիսը՝

ա) զրպարտություն հանդիսացող փաստացի տվյալների հրապարակային հերքում: Հերքման ձևը սահմանում է դատարանը «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով,

բ) զրպարտությունը տարածած ՁԼՄ-ում դատարանի վճռի հրապարակում: Հրապարակման եղանակը եւ ծավալը սահմանում է դատարանը,

գ) միանվագ փոխհատուցման վճարում՝

- նվազագույն աշխատավարձի մինչեւ 500-ապատիկի չափով,
- զրպարտությունը անձի դիտավորության կամ կոպիտ անզգուշության հետեւանքով զանգվածային լրատվության միջոցներով տարածվելու դեպքում՝ նվազագույն աշխատավարձի մինչեւ 1000-ապատիկի չափով
- զանգվածային լրատվության միջոցով զրպարտության դեպքում զանգվածային լրատվություն իրականացնողի կողմից՝՝ նվազագույն աշխատավարձի մինչեւ 2000-ապատիկի չափով:

Գումարի չափը սահմանում է դատարանը՝ հաշվի առնելով կոնկրետ գործի առանձնահատկությունները:

8. Սույն հոդվածի 6- 7-րդ մասերով սահմանված բարոյական վնասի հատուցում ստանալու հետ միասին անձն իրավունք ունի իրեն վիրավորանք հասցրած կամ զրպարտած անձից դատական կարգով պահանջել վիարվորանքի կամ զրպարտության հետեւանքով իրեն պատճառված նյութական վնասները, այդ թվում՝ ողջամիտ դատական ծախսերը եւ խախտված իրավունքների վերականգման համար իր կողմից կատարված ողջամիտ ծախսերը:

9. Սույն հոդվածով սահմանված կարգով իրավունքի պաշտպանության հայց կարող է ներկայացվել դատարան վիրավորանքի կամ զրպարտության տարածման մասին անձին հայտնի դառնալու պահից մեկ ամսվա ընթացքում, սակայն ամեն դեպքում ոչ ուշ քան հրապարակման պահից վեց ամսվա ընթացքում:

Հոդված 3. Օրենսգրքի 22-րդ հոդվածի .19 հոդվածովե բառերը փոխարինել .1087.1-րդ հոդվածովե բառերով:

Հոդված 4. Եզրափակիչ դրույթներ

Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

Հ. Սարգսյան ՕՏԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 5-ի քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 19-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 19. Պատվի, արժանապատվության և գործարար համբավի պաշտպանությունը

Քաղաքացու պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավը ենթակա են պաշտպանության այլ անձի (անձանց) կողմից հրապարակայնորեն արտահայտված վիրավորանքից եւ զրպարտությունից՝ սույն օրենսգրքով և այլ օրենքներով սահմանված դեպքերում ու կարգով»:»

Հոդված 2. Օրենսգրքի 60-րդ գլուխը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 2.1.-րդ պարագրաֆով.

«§2.1. Պատվին, արժանապատվությանը և գործարար համբավին պատճառված վնասի հատուցման կարգը և պայմանները:

Հոդված 1087.1. Պատվին, արժանապատվությանը և գործարար համբավին պատճառված վնասի հատուցման կարգը և պայմանները

1. Քաղաքացին, որի կարծիքով իր պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորել են վիրավորանքի կամ զրպարտության միջոցով, կարող է դիմել դատարան վիրավորանքը կամ զրպարտությունը հրապարակայնորեն տարածած անձի դեմ:
2. Սույն օրենսգրքի իմաստով վիրավորանք է համարվում խոսքի, պատկերի, ձայնի, նշանի կամ այլ միջոցով կատարված հրապարակային արտահայտությունը (կարծիքը կամ գնահատող դատողությունը), որի նպատակը կամ մտադրությունը անձին արատավորելն է:

   Սույն հոդվածի իմաստով արտահայտությունը չի համարվում անձին արատավորելու մտադրությամբ տարածված, եթե այն տվյալ իրավիճակում և իր բովանդակությամբ պայմանավորված է գերակշռող հանրային կամ իրավաչափ մասնավոր շահով:

8. Սույն հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով սահմանված միջոցներով բավարարում ստանալու հետ միասին քաղաքացին իրավունք ունի իրեն վիրավորանք հասցրած կամ զրպարտած անձից դատական կարգով պահանջել վիարվորանքի կամ զրպարտության հետևանքով իրեն պատճառված վնասները, այդ թվում՝ դատական ծախսերը և խախտված իրավունքների վերականգնման համար իր կողմից կատարված ծախսերը, որոնց չափը սահմանում է դատարանը:

9. Եթե վիարավորանքը կամ զրպարտությունը դրանք տարածած անձի դիտավորության կամ կոպիտ անզգուշության հետևանքով տարածվել են զանգվածային լրատվության միջոցներով, ապա այդ անձը որպես բարոյական վնասի հատուցում պետք է վճարի միանվագ գումար համապատասխանաբար զրպարտության դեպքում՝ նվազագույն աշխատավարձի 1000-ապատիկի, իսկ վիրավորանքի դեպքում՝ մինչև 500-ապատիկի չափով: Գումարի չափը սահմանում է դատարանը՝ հաշվի առնելով կոնկրետ գործի առանձնահատկությունները:

10. Եթե վիրավորանքը կամ զրպարտությունը տարածվել են զանգվածային լրատվության միջոցներով, բացառությամբ, եթե նման տեղեկությունը տարածվել է հեռուստատեսությամբ և(կամ) ռադիոյով ուղիղ հեռարձակմամբ, ապա վնաս կրած անձն իրավունք ունի զանգվածային լրատվական գործողություն իրականացնողից պահանջել՝

ա/ հրապարակել պատասխան,

բ/ ուղղել փաստերի մասին սխալ հայտարարությունը,

գ/ հրապարակել դատարանի վճիռը, որը հավաստում է փաստերի մասին սխալ լինելը,

դ/ վճարել փոխհատուցում սույն հոդվածի 11-րդ մասով սահմանված կարգով:

11. Եթե սուն հոդվածի 10-րդ մասով սահմանված միջոցները բավարար չեն խախտած իրավունքները վերականգնելու համար, ապա դատարանը կարող է զանգվածային լրատվական գործունեություն իրականացնողից պահանջել վճարել համապատասխանաբար զրպարտության դեպքում նվազագույն աշխատավարձի մինչև 2000-ապատիկի իսկ վիարվորանքի դեպքում մինչև 1000-ապատիկի չափով միանված գումար:

Գումարի չափը սահմանելիս դատարանը պետք է հաշվի առնի հետևյալ հանգամանքները.

ա) զանգվածային լրատվության միջոցի կողմից պատասխան կամ ուղղում հրապարակելու մասին առաջարկ լինելը,

բ) վիճարկվող հրապարակման հավասարակշռված ձևով ներկայացված լինելը,

գ) հրապարակման վերաբերելիությունը էական հանրային հետաքրքրություն ներկայացնող խնդիրներին և դրա նպատակաուղղվածությունը հանրային շահին ծառայելուն:

12. Անձը կարող է ազատվել սույն հոդվածով սահմանված պատասխանատվությունից, եթե նա կրկնել է այնպիսի զրպարտող փաստացի տվյալ, որը նախկինում հրապարակայնորեն տարածվել է և չի հերքվել զանգվածային լրատվության մասին ՀՀ օրենքով սահմանված կարգով և ժամկետում:

13. Անձը չի կարող ազատվել սույն հոդվածով սահմանված պատասխանատվությունից, եթե նա կրկնել է նախկինում մեկ այլ անձի կողմից արտահայտված վիրավորանքը՝ անկախ դրա տարածման միջոցներից և ժամկետից:

14. Դատարանը սույն հոդվածով սահմանված վնասի հատուցման չափը սահմանելիս պետք է հաշվի առնի պատասխանողի գույքային դրությունը:

15. Սույն հոդվածով սահմանված կարգով իրավունքի պաշտպանության հայց կարող է ներկայացվել դատարան վիրավորանքի կամ զրպարտության տարածման մասին անձին հայտնի դառնալու պահից մեկ տարվա ընթացքում:

16. Անձի գործարար համբավի պաշտպանության մասին սույն հոդվածի կանոնները համապատասխանաբար կիրառվում են իրավաբանական անձի գործարար համբավի պաշտպանության նկատմամբ:

Հոդված 3. Օրենսգրքի 22-րդ հոդվածի «19 հոդվածով» բառերը փոխարինել «1087.1-րդ հոդվածով» բառերով:

Հոդված 4. Եզրափակիչ դրույթներ

Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-774[1]-25.11.2009-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի քրեական օրենսգրքի 135-րդ և 136-րդ հոդվածները ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

Պ-774[2]-25.11.2009-ՊԻ-010/0

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հուլիսի 1-ի քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 1-ին մասից հանել «135-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերով, 136-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերով,» բառերը:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

ՏԵՂԵԿԱՆՔ - ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի ընդունման անհրաժեշտության

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին նախագծերի փաթեթի ընդունումը նպատակ ունի կարգավորել խոսքի ազատության չարաշահման հետ կապված հասարակական հարաբերությունները: Նման կարգավորումը միտված է պաշտպանելու անձի պատիվն ու արժանապատվությունը, կեղծ զրպարտչական և (կամ) վիրավորական արտահայտություններից: Խոսքի արտահայտությունն ընդունելով որպես բարձրագույն արժեք ժողովրդավարական հասարակությունում, այնուամենայնիվ, անհրաժեշտ է փաստել, որ այն բացարձակ իրավունք չէ և կարող է սահմանափակվել այլոց իրավունքների պաշտպանության նպատակով (Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մաս, ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդված): Խոսքի ազատության սահմանափակումը կարող է լինել իրավաչափ, եթե այդ սահմանափակումը պաշտպանում է որևէ անձի պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավը, եթե այդ սահմանափակումը սահմանված է օրենքով և եթե այդ սահմանափակման դեպքում նախատեսված պատասխանատվությունը համաչափ է ժողովրդավարական հասարակության չափանիշների տեսանկյունից: Չնայած այն հանգամանքին, որ յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, այնուամենայնիվ չպետք է մոռանալ, որ յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որպեսզի հարգվի իր անձնական ու ընտանեկան կյանքը:

Որպես անձի պատվի, արժանապատվության և բարի համբավի պաշտպանության սահմանադրական իրավունքի ապահովման երաշխիք՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 19-րդ հոդվածի առաջին մասը սահմանում է. «**Քաղաքացին իրավունք ունի դատարանով պահանջել հերքելու իր պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորող տեղեկությունները, եթե նման տեղեկություններ տարածած անձը չապացուցի, որ դրանք համապատասխանում են իրականությանը:**»: «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Անձն իրավունք ունի լրատվական գործունեություն իրականացնողից պահանջել

հերքելու իր իրավունքները խախտող փաստացի անճշտությունները, որոնք տեղ են գտել լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, եթե վերջինս չի ապացուցում, որ այդ փաստերը համապատասխանում են իրականությանը:»:

Այս հոդվածներից երևում է, որ Հայաստանում պատվի, արժանապատվության և գործարար համբավի քաղաքացիաիրավական պաշտպանության առաջին և հիմնական ձևը միայն հերքումն է, իսկ դրա համար առաջին կարևոր պայմանն այն է, որ տարածված տեղեկատվությունը պետք է արատավորի մարդու պատիվն ու արժանապատվությունը, խախտի նրա իրավունքները: Նշված դրույթներում, սակայն, բացակայում է արատավորող ճանաչելու չափանիշները: Յուրաքանչյուր դեպքում դատարանը պետք է հիմք ընդունի, թե արդյոք տարածված տեղեկությունները հասարակության մեջ ընկալվում են որպես արատավորող, ինչպես օրինակ՝ անգրագետ, հիմար, պատեհապաշտ, դրածո և այլ արտահայտությունները կամ տարբեր անհատական որակումներով ներկայացնելը:

Բացի այդ վերոնշյալ դրույթների համաձայն ապացուցման պարտականությունը դրված է տեղեկություններ տարածած անձի՝ պատասխանողի վրա, այն դեպքում, երբ Արտիկլ 19 կազմակերպության «Մահմանել զրպարտությունը» հրապարակման 7-րդ սկզբունքում ամրագրված է, որ տեղեկությունները կեղծ լինելը ապացուցելու պարտականությունը պետք է կրի հայցվորը:

Նախագծում տեղ գտած սահմանումները և ձևակերպումները առավելագույնս հստակեցվել են, որպեսզի խոսքի ազատությունը և այդ իրավունքի իրացնողները առավելագույնս պաշտպանված լինեն վիրավորանքի կամ զրպարտության կամայական մեկնաբանություններից:

Այսպես, փոփոխվող հոդվածի համաձայն՝

ա) վիրավորանք է համարվում խոսքի, պատկերի, ձայնի, նշանի կամ այլ միջոցով կատարված հրապարակային արտահայտությունը (կարծիքը կամ գնահատող դատողությունը), որի նպատակը կամ մտադրությունը անձին արատավորելն.

բ) զրպարտություն է համարվում անձի վերաբերյալ այնպիսի ոչ ճշմարիտ փաստացի տվյալների հրապարակային տարածումը, որոնք արատավորում են նրա պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավը:

Ամենևին պարտադիր չէ, որ պատիվը, արժանապատվությունը եւ գործարար համբավը արատավորող գործողությունները լինեն դիտավորությամբ կատարված, նույնիսկ անփութությամբ կատարվածը արատավորողին պատասխանատվությունից չի ազատվում:

ՀՀ Քաղաքացիական օրենսգրքում նախատեսված փոփոխությունները ու լրացումը հնարավորություն կտան ֆիզիկական անձանց քաղաքացիական դատավարության ընթացակարգերով վերականգնել իրենց պատվի և արժանապատվության, խախտված իրավունքի վերականգնում հերքման, պատասխանի , ինչպես նաև դրամական հատուցման եղանակով: Նմանապես՝ իրավաբանական անձինք նշված ընթացակարգերով և եղանակներով կկարողանան պաշտպանել իրենց գործարար համբավը զրպարտչական արտահայտություններից:Նշված

փոփոխություններով անձի արժանապատվությունը կամ գործարար համբավը պաշտպանվում են ոչ միայն ֆիզիկական անձի, այլև զանգվածային լրատվական միջոցների կեղծ կամ վիրավորական ոտնձգություններից:

Վերջապես դատարանին իրավունք է վերապահված հաշվի առնելով կոնկրետ և հստակ հանգամանքները առավել մեղմ պատասխանատվություն նախատեսել հրապարակային արտահայտություններ կամ ոչ ճշմարիտ փաստացի տեղեկություններ տարածող անձանց նկատմամբ:

Որպես կանոն իրավաբանական նորմատիվ բազան պետք է ապահովի անմեղների արդյունավետ պաշտպանությունը և չպետք է սահմանափակի նյութերի հրապարակումը միայն այն պատճառով, որ դրանք կարող են վնասել պաշտոնատար անձանց հասարակական վարկին: Ճիշտ է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումներում ասվում է, որ քաղաքական գործիչները «անխուսափելիորեն և գիտակցաբար իրենց յուրաքանչյուր խոսքը և գործողությունը հրապարակայնորեն են կատարում, ուստի համաձայնվում է այն բանի հետ, որ յուրաքանչյուր խոսք և գործողություն կարող է դառնալ լրագրողների և հանրության համար վերլուծության առարկա և ըստ այդմ նրանք պետք է ավելի մեծ հանդուրժողականություն ցուցաբերեն», այնուամենայնիվ, այս դեպքում խոսքը վերաբերում է քաղաքական գործչի խոսքին, գործունեությանը՝ ոչ թե անձին:

Ժողովրդավարական շատ պետություններում ենթադրվում է, որ ԶԼՄ-ները հասարակությանը սատարելու համար հաճախակի անհանգստացնում են պետական պաշտոնյաներին, որը երբեմն հանգեցնում է ԶԼՄ-ների անպատասխանատվությանը, սակայն անկախ դատական իշխանությունը և արդյունավետ գործող մամուլի խորհուրդները կարող են աջակցել նման շեղումների դեմ պայքարում:

Լրագրողների կողմից որոշակի պատասխանատվություն ստանձնելու և մասնագիտական գործունեության հետ կապված էթիկայի նորմեր կիրառելու պարտավորության օրինակ կարող է ծառայել Մոլդավիայի լրագրողների Սինդիկատի որոշումը, համաձայն որի՝ լրագրողը պետք է ձեռնարկի բոլոր անհրաժեշտ գործողությունները հասարակությանը ապահովելու հավաստի, ճիշտ, ստուգված, լրիվ և մասնագիտական տեղեկատվությամբ: Լրագրողը պարտավոր է հրաժարվել այնպիսի տեղեկատվության հրապարակումից, եթե պարզվի որ այն չի համապատասխանում իրականությանը, սպեկուլյատիվ բնույթ ունի, լրիվ չէ և ունի առևտրային ուղղվածություն: Անապացույց մեղադրանքները, վստահության չարաշահումը, մասնագիտության կամ ԶԼՄ-ների օգտագործումը անձնական կամ խմբակային շահերի նպատակով, փաստերի խեղաթյուրումը, ցանկացած սուտ տեղեկատվության կանխամտածված մատուցումը լրագրողի կողմից՝ դիտվում է որպես լրջագույն մասնագիտական զանցանք: Լրագրողը պատասխանատվություն է կրում իր բոլոր հրապարակումների համար (հրապարակային ներողություն, հերքում, վնասների փոխհատուցում):

համբավի պաշտպանության նկատմամբ:

Հոդված 22. Քաղաքացու անունը

1. Քաղաքացին իրավունքներ եւ պարտականություններ է ձեռք բերում ու իրականացնում իր անվամբ, որը ներառում է նրա ազգանունը եւ անունը, նրա ցանկությամբ՝ նաեւ հայրանունը:

Օրենքով նախատեսված դեպքերում եւ կարգով՝ քաղաքացին կարող է օգտագործել կեղծանուն (մտացածին անուն):

2. Քաղաքացին իրավունք ունի օրենքով սահմանված կարգով փոխել իր անունը: Քաղաքացու անվան փոխելը հիմք չէ նախորդ անվամբ ձեռք բերված նրա իրավունքները եւ պարտականությունները դադարելու կամ փոփոխելու համար:

Քաղաքացին պարտավոր է իր պարտապաններին եւ պարտատերերին տեղյակ պահել անունը փոխելու մասին ու կրում է իր անունը փոխելու վերաբերյալ այդ անձանց մոտ տեղեկությունների բացակայության հետեւանքով առաջացած վնասների ռիսկը:

Անունը փոխած քաղաքացին իրավունք ունի պահանջել, որպեսզի իր հաշվին համապատասխան փոփոխություններ մտցվեն իր նախկին անվամբ ձեւակերպված փաստաթղթերում:

3. Ծննդյան ժամանակ քաղաքացու ստացած անունը, ինչպես նաեւ նրա անվան փոփոխությունը ենթակա են գրանցման՝ քաղաքացիական կացության ակտերի գրանցման համար սահմանված կարգով:

4. Այլ անձի անվամբ իրավունքներ եւ պարտականություններ ձեռք բերել չի թույլատրվում:

5. Քաղաքացու անվան ապօրինի օգտագործմամբ նրան պատճառված վնասը ենթակա է հատուցման՝ սույն օրենսգրքին համապատասխան:

Քաղաքացու պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը շոշափող եղանակով կամ ձեւով նրա անունն աղավաղելու կամ օգտագործելու դեպքում կիրառվում են սույն օրենսգրքի 19 հոդվածով նախատեսված կանոնները:

ՀՈԴՎԱԾ 135. ԶՐՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

1. Զրպարտությունը՝ ուրիշի պատիվն ու արժանապատվությունը նվաստացնող կամ բարի համբավն արատավորող ակնհայտ սուտ տեղեկություններ տարածելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքները, որոնք կատարվել են կրկին անգամ՝

պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հազարապատիկի չափով կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով:

(135-րդ հոդվածը փոփ. 09.06.04 ՀՕ-97-Ն օրենք)

ՀՈԴՎԱԾ 136. ՎԻՐԱՎՈՐԱՆՔԸ

1. Վիրավորանքը՝ ուրիշի պատիվն ու արժանապատվությունն անպարկեշտ ձեւով ստորացնելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքները, որոնք կատարվել են

կրկին անգամ՝

պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից ութհարյուրապատիկի չափով:

(136-րդ հոդվածը փոփ. 09.06.04 ՀՕ-97-Ն օրենք)

ՀՈԴՎԱԾ 183. ՏՈՒԺՈՂԻ ԲՈՂՈՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՀԱՐՈՒՑՎՈՂ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասով, 114-րդ հոդվածի 1-ին մասով, 115-րդ հոդվածի 1-ին մասով, 116-րդ հոդվածի 1-ին մասով, 117-րդ հոդվածով, 118-րդ հոդվածով, 119-րդ հոդվածի 1-ին մասով, 120-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերով, 121-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերով, 124-րդ հոդվածի 1-ին մասով, 128-րդ հոդվածի 1-ին մասով, 135-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերով, 136-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերով, 137-րդ հոդվածի 1-ին մասով, 158-րդ հոդվածի 1-ին մասով, 174-րդ հոդվածով, 177-րդ հոդվածի 1-ին եւ 4-րդ մասերով, 178-րդ հոդվածի 1-ին մասով, 179-րդ հոդվածի 1-ին մասով, 181-րդ հոդվածի 1-ին մասով, 183-րդ հոդվածի 1-ին մասով, 184-րդ հոդվածի 1-ին մասով, 185-րդ հոդվածի 1-ին մասով, 186-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերով, 197-րդ հոդվածով, 213-րդ հոդվածի 1-ին մասով, 242-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերը հարուցվում են ոչ այլ կերպ, քան տուժողի բողոքի հիման վրա, եւ կասկածյալի կամ մեղադրյալի կամ ամբաստանյալի հետ նրա հաշտվելու դեպքում ենթակա են կարճման: Հաշտությունը թույլատրվում է մինչեւ դատավճիռ կայացնելու համար դատարանի խորհրդակցական սենյակ հեռանալը:

2. (183-րդ հոդվածի 2-րդ մասն ուժը կորցրել է 21.02.07 ՀՕ-93-Ն օրենք)

3. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված կարգից շեղումներ կարող են սահմանվել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

(183-րդ հոդվածը փոփ. 14.12.04 ՀՕ-57-Ն, 21.02.07 ՀՕ-93-Ն օրենքներ)